

հայր. Սուրբ Երսղմյ. Գրիգոր արքեպսին...»: (Խոսյ. Յուզ. տետր. Ժէ. էջ 1321-22):

ԴԱԻԻԹ ԵՐԷՑ ԵՒԴՈՒԿԻԱՅԻ.— (Տաշ. Յուզ. թ. 218 էջ 840-41) կը բովանդակէ երկար և կիսկատար յիշատակարան մը ուրկէ կ'իմացուի թէ՛ Եւզոկիացի Դաւիթ երէց 1651ին, Պոլսէն ճամբայ ելլելով՝ այլ և այլ ճամբաներով կը հասնի Հալէպ, ուր կը հանդիպի հոգեւոր տիրոջ՝ Փիլիպպոս կթղ.ին եւ սեբաստացի Սասյ Ներսէս կթղ.ին ինչպէս կը վկայէ ուրիշ յիշատակագիր մ'ալ 1652 ին, (Տաշ. Յուզ. էջ 442): Դաւիթ երէց կը մտադրէ Երուսաղէմ ուխտի գալ, կը պատահի Ս. Վահան Գողթնացուն զերեզմանին, ուր կը կատարէ իր ուխտը. և մինչև Համուս քաղաքը հասնիլը կը յիշէ, որմէ վերջ կ'ընդհատուի յիշատակարանը. իր ճամբորդութեան մանրամասնութիւններուն համար անսնել վերը յիշուած յիշատակարանը:

ԴԱԻԻԹ ԿԹՂ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏՅԻ.— Գրիգոր ԺԲ. Վաղարշապատցիի օրով. (1576-1590). փակակալ Ս. Էջմիածնի (1584-1589). Առաքել վրդ. Դաւրիժեցիին և Սիմէոն կթղ. Երևանցիի համաձայն, աթուակից Գրիգոր ԺԲ.ին, կթղ. կ'ընտրուի Դաւիթ Գ. 1590ին, 49 տարի թէև կաթողիկոս անունը կը կրէ. բայց բուն կանոնական շրջանն է (1590-1629). կը վախճանի 1633 ին, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը: ՄՁ. թ. 397 ձեռագիրը ունի հետեւեալ յիշատակարանը. «Ի թվին Հայոց Ռկթ 1620 ամին, Դաւիթ կաթողիկոսն Ս. Էջմիածնայ եկաւ ի Ս. Երուսաղէմ երկրպագութիւն լուսարուխ գերեզմանին Քսի. Յունվարի ամսոյն ի ԺԸ. առուն Գշարաթի»: Տեսնել նաև Յովհաննէս Զէյթունցիին Հարակց վարէ մը քաղուած յիշատակարանին ընդօրինակութիւնը իր ձեռագրին մէջ:

ԴԱԻԻԹ ՀԱՅԿԱՉՆ.— Ծ. Հայաստան, ազնուական ընտանիքէ (ԺԱ. դար). իր սաացուածքները կը ծախէ և հետիոտն ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և Քրիստոսի Ս. Գերեզմանը. յետոյ կ'ուղևորի Հոռովմ. նոյն նպատակով երբ կը փափագէր Սպանիոյ Ս. Յակոբ առաքեալին ալ իր ուխտը կատարել, ճանապարհի նեղութիւններէն կը հիւանդանայ իտալիոյ Լուքա (Lucca) քաղաքը և կը վախճանի 1050 Յունիս Յին: 1646 թուին անոր նշխարաց փոխադրութեան և դամբարանին ուխտա-